

ՏՕՎԱՐ

Զարթոնք
Երևան

Անբար

Չնգուշ



Տ.Ս.Ր.Ի, Թ.Ի.Ի 5, ՄԱՅԻՄ 1, 1928

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻԿ ԶՆԳՇՈՅ ԾՕ ՎԱՌ ԸՆԹԵՐՑ. ԸՆԿ.-ԵԱՆ

Հրատարակելի Գրութիւններ Ղրկել 1326 W. Huron St., Chicago, Ill.

ՆՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԵՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ

Հայրենի հողին բռնաժողով՝ աշխարհի չորս ծառերը ցան ու ցրիւ ապրող ողջ հայութիւնը, տարին մեկում մը, Ապրիլ 24ին, կը վերջուէ թուրք բարձարութեան երկաթէ կրակներուն տակ անդթօրէն իրենց անասաններու աչքով ու մրկող ուռններուն վրայ ցաւազինօրէն մահացած եւ կամ ետներու սէպ բարձունքներուն վրայ գէն ի ձեռին ինչեւ վերջին շունչը կուտելով ինկող հայ նահատակներու անմոռանալի յիշատակը:

Այս ի խորէ սրտի եւ երկիւղած վերջիւումը որոշան յարգանքի արիտուր մըն է մեր յայտնի ու անայտնի նահատակներու չորհարակց մահուան, որոշան եւ ցուցարար նշանն է թէ տակաւին կ'ապրին հայ հողին բնորոշող հողեկան ու բարոյական արժէքները՝ իրենց բնապատկան տարհալածուած այ բեկորներու սրտին մէջ:

1915ի արիւնտա սպանդը այս՝ խոշտանդեց հատեն մարմինը, անլուր թշուառութեան եւ գրկանքներու մատնեց իր ճակատին քրտինքովը իր արդար արտուտուր ճարող հայ գիւղացին, առեւտրականը ու մտքի աշխատաւորը, աւերեց երբեմնի շէն ու լուարթ գիւղերն ու աւանները, եւ սակայն չկրցաւ այդ արիւնի ծովուն մէջ խեղդել հայուն գիմադրան ողին եւ ազատատենչ խոյանքները:

Հայ նահատակութեան պատմութիւնը՝ որքան նահազու եւ լեցուն ահաւոր ողբերգութիւններով, ինչի հերոսական մարտնչումներու եւ արիական

խիղախումներու դրուագներ, սրունք հայ ժողովուրդի հողեկան արժէքներուն՝ խաւարը փեռեկատող ճառագայթումներն են՝ յուսաւոր ու հրաշագեղ:

Այդ հողեկան արժէքներու լիողփողովալլ ճառանչումին մէջ անտարակոյս իր դերը ունեցաւ նաեւ մեր հայրենի գիւղը՝ Չնգուշ:

Թէեւ տակաւին անյայտ Չնգուշցիներու վիճակուած բախար այդ արիւնտու եղերերգութեան մէջ, վստահ ենք սակայն որ Չնգուշցին իննէլ չլինելու այդ ճակատագրական վայրկեանին ցոյց տուաւ իր գիմադրական ողին եւ սյօր՝ անհամար թիւերով իր վրայ խուժող թուրք եւ քիւրտ վայրենաբարոյ հորդաներուն դէմ: Վստահ ենք թէ Ծօվառ՝ այդ հերոսներու սպաստան լեռը, մեր քաջամարտիկներու հրազեններուն բամբ որոտը եւ հայրենաշունչ երգերը արձագանգեց: Վստահ ենք թէ Չնգուշցին ինկաւ կուտելով մինչեւ իր արեան վերջին կաթիլը, սրովհետեւ Չնգուշցին չէր կրնար լուռ համակերպօղն ըլլալ եւ առանց կուտելու թոյլ տալ որ թշնամին առեւանգէ իր կոյս սղջիկները, մորթոտէ իր սիրասուն մայրերը, աւերէ իր նուիրական օճախները եւ սրբանուէր տաճարները:

Եւ արդէն Չնգուշցին անցեալին մէջ ցոյց տուած է իր գիմադրական ողին եւ հայրենիքի սրբազան դատին ու ազատութեան ի խնդիր ոգորումն ու խիղախ ընդգիմութիւնը: Ան գիտէր կուտիլ եւ խրոխտ կեցուածքով մը ճակատիլ զինքը անիրաւել ուղող հող չէ թէ անհաւասար սյօրերու դէմ: Այս անհերքելի սուեալները մեզ կը վստահացնեն թէ Չնգուշցին իր նահատակութեան պատմութիւնը դրեց գէնքով, զարկաւ ուժգին եւ զարնուեցաւ քաջի պէս:

500 ՏՈՒՆԱՐ ՆՈՐ ԶՆԳՈՒՇԻ ՀԱՄԱՐ

Մեզի՛ վերապրողներուս կը մնայ երկիւղածօրէն խոնարհելի մեր սիրելի նահատակաց անյայտ շիրիմներուն առջեւ եւ ուխտել անջնջելի պահել անոնց խնկելի յիշատակը մեր հոգիներուն խորը:

Այս օրերուն մանաւանդ, երբ մեր նահատակները կը խօսին, պէտք է բռն այն բոլոր զգացումներն ու խորհուրդները, որոնք անհարազատ են Չնդուչիի հոգիին:

ԱՆԵՐԵՒՈՅԹ ԹՇՆԱՄԻՆ

Հին տղեղ մտայնութիւն մը տակաւին կը տիրէ մեր մէջ եւ կ'երեւի փոփոխելիք ալ չունի: Այդ մտայնութիւնը Փիղիքականը տկարացնելէ դատ, հոգեկան ստորնացումի կ'առաջնորդէ մարդը:

Երկրին մէջ երբ Կիրակի օրերը եկեղեցիէն դուրս կ'երլէինք, կը տեսնէինք մուրացիկներու շարք մը կծկուած պատերուն տակ: Մեր հայրերը անոնց սփին մէջ տասը փարանոց մը սահեցնելը հոգեկան դոհունակութիւն կը նկատէին: Անշուշտ այդ օգնութիւնը իր պարիկ օգտակարութիւնը կ'ունենար, սակայն արմատական փոփոխութիւն չէր յառաջացրէր, քանի որ յաջորդական Կիրակի օրերուն նոյն մուրացիկները կրկին հոն էին ողորմութիւն ստանալու համար: Անվերջ մուրացիկանութիւն եւ անվերջ ողորմութիւն:

Նոյն մտայնութիւնը կայ եւ այսօր, շատեր սղարմութիւն տալը առաքինութիւն կը նկատեն եւ առ այդ կը կադմակերպուին, ձեռնարկներ կ'ընեն, պղտիկ հասոյթ մը ձեռք կը բերեն եւ շտակ արտասահման կը դրկեն, կը բաւ որ նամակ մը ստանան ազօթքի մրմունջներով լեցուն: Անոնց իրիզը հանդիսա է այլեւս, որովհետեւ կը խորհին թէ մեծ մարդասիրական գործ մը բրած են: Կացութիւնը սակայն կը մնայ նոյնը եւ ահա մէկ կամ երկու ամիս վերջ նորէն աղերսական նամակներ կը հասնին:

Թերեւս շատեր խորհին թէ հակառակ ենք թշուաններու օգնութիւն ընձեռելու գործին, ընդհակառակը, պիտի դնահատէինք թէ համոզուէինք թէ տարեկան 15-20 տողարի օգնութիւն մը բաւարարութիւն պիտի տար գաղթականի մը պէտքերուն: Իրողութիւնը այն է որ զրկուած գումարները բաւարարութիւն չտալէ դատ, նպատարնակները կը մղեն ծուրութեան եւ յուսալքումի, որոնց արդիւնքը կ'ըլլայ հոգեկան եւ բարոյական կորուսի փճացում:

Արտասահմանէն եկած թղթակցութիւններ ինքնին փառտեր են թէ՛ շատեր իրենց Ամերիկայի բարեկամներուն օգնութեան վստահելով անհոգ եւ ծոյլ կեանք մը կ'ապրին:

Մեր մասնակի օգնութեամբ դանոնք կը մղենք մուրացիկանութեան: Ասիկա կը մերկացնէ մարդը իր մարդկային առաքինութիւններէն: Յոռեզոյն մեղք մըն է ասիկա եւ այս մեղքը կը ծանրանայ մեր ուսերուն վրայ:

Հետեւարար պէտք է մտածել արմատական փոփոխութիւն մը մտցնելու մասին՝ տիրող մտայնութեան մէջ: Փոխանակ ողորմութիւն տալու, մեր գաղթականութիւնը ինքնապահ վիճակի մէջ դնելու աշխատանքին պէտք է լծուիլ:

Արդէն շատ մը կադմակերպութիւններ այս ուղղութեամբ կը գործեն, ինչպէս Հ. Բ. Ը. Միութիւնը, որ հիմնած է արհեստանոցներ: Եթէ պէտք կայ օգնելու, օչնելու է միայն անոնց որոնք անատակ են աշխատանքի՝ ծերութեան եւ այլ տկարութեան պատճառաւ:

Այս յոռի մտայնութիւնը շատ գիւրաւ կրնայ փոփոխիլ, եթէ ամանք իրենց անձնական փառասիրութիւնը դահն յանուն հանրային օգտակարութեան:

Կը բաւ ամանց ձրի բարեբարի տիտղոսը շահելու անիմատ եւ փնասակար տենչը:



Շիքակոյի մեր հրեանակիցներէն Պր. Պուչուրամեան 500 տողար խոստանայ յատանի մէջ Նոր Չնդուչի շինութեան մար: Այս խոստանայ սոցաճոյուած է անտոյս մ. ճիւղին կողմէ Պրն. Գ. Պուչուրամեան վերոյիշեալ գումար անմիջապէս պիտի բամազրէ Միութեան կեդրոնին, երբ որ ուղղութեամբ գործը կան քայիւր առնուի: Այն պարագային որ եւ պատճառաւ թիւ ութեան կեդրոնը պազի գործնական բըրըր առնել, եւ այս բըրըրը:

պազումի միջոցին եթէ մահ ալ պատահի Պրն. Պուչուրամեանի, մահունէ վերջ ալ իր խոստումը իրագործուելու գործ մար ինքը կարգապարտութիւն բրած է որ իր կեանքի ապահովագրութեան գրամէն 500 տողար խոստանայ խոստանայ նպատակին:

Ահաւասիկ գեղեցիկ օրինակ մը մեր ունեւոր եւ տահայրենակիցներուն համար: Արդեօք պիտի կրնանք պրեանակէ աւելի պատուարեր ստիթ մը, որով կարենան ծառայել իրենց ունեցածով թէ՛ իրենց ծննդավայրի անուան յաժայցման եւ թէ ի վրէժ խնդրութիւն մեր դարաւոր թշնամի հինին տեղ նոր մը շինելով:

Այս պարագան դատ մը թող բլլայ նաեւ բոլոր անոնցներունք Շիքակոյի փողոցները ինկած են եւ իրենց անունը կը ստորագրել չգիտցող հայրենակիցներէ ստորագրութիւններ հաւաքեն, որպէս զի անոնցմով դատարան ներկայանալուսն թէ՛ իրենք այս քուէներով կեդրոնացում եւ կեդրոնացումը ճանչնալ:

Հէ՛յ, խիկարներ, այսօր սուտ ու փուճ խօսքերով վառաք համոզել ձեր անմիջական ազգեցութեան տակ գանձուող տգէտները: Հապա վա՞ղր, մօտիկ ապագային, երբ իր Միութիւնը գտնայ Միութեան հիմնական նպատակը: Երբ նաւանդ յառաջիկայ տարիէն սկսեալ ընդհանուր կեդրոնացումը իր գորաւոր թափով գործի սկսի, այն ատեն որով ձեր հանած աղմուկը ստուերի տակ պիտի մնայ եւ մենք Պրն. Պուչուրամեանի պիտի յատարանք գէպի մեր նպատակին կ'գործումը: Շիքակոյ

Մեոցենք աներեւոյք բշմամիւն, ողորմութիւն տալու մտայնութիւնը, որպէս զի կարենանք մեր բեկորները հապահել մուրացիկանութեանէ, որ ոչ այլ ինչ է բայց եթէ բոյական անանկութիւն:

ՆՈՒԻՐՆԵՐ «Ծ Օ Վ Ա Ռ»

Թուխման Զարօտան, Լօրէնէն
Ֆրէզիոյի հուկիթախոյին մէջ ՊՊ. Խ. Ս. Սրբբմեանի եւ Թորոս Տօբուզիանի ծախած «Ծօվաւ» ջուրէն ղոյացած

Գոմար՝

ՊՐՆ. ԱՐԱՆԱՍ ՏԱՂՏԻԿԵԱՆ

Շիքահոյի մեր հայրենակիցներէն Պրն. Ա. Տաղտիկեան Central Trust Co. of Illinois Bank-ի մէջ 16 երկար տարի- յոցու իր հաւատարմութեան ի վարձատրութիւն յայտարարեց թէ 3000 տոլարի ապահովագրութեան փախի մը: Պրն. Ա. Տաղտիկեան կողմէ իր կարգի աշխատանքներուն մէջ միակ աշխատանքն էր վարձել ամէնուն վստահութիւնը: Այս տո- յարարութիւնը մեր յիշելու աւելորդ պիտի չըլլայ՝ հասկնալու ամար թէ Պրն. Տաղտիկեան սրբան յարգ կը վայելէ զրա- յատան կողմէ:

Վերջերս երկու ուսանողուհիներ Նիւ Եորք կը հասնին. անոնց Ամերիկա մուտքը դիւրացնելու համար 15,000 տոլար- ի երաշխաւորութիւն կը պահանջէ գաղթային վարչութիւ- ը: Այս խնդրոյն համար Պ. Տաղտիկեան կը դիմէ զբաժնա- ղան նախագահին, որ անոնց հետաքրքրուելու թէ ի՞նչ է յոյսը: Տաղտիկեանի նիւթական կարողութիւնը, անմիջապէս 15,000 տոլարի երաշխաւորութիւնը կը հետադրէ Նիւ Եորք գաղթային վարչութեան եւ ուսանողները կը յաջողին Ամե- ռիկա մտնել:

Պրն. Տաղտիկեան բացի ասիկ մեծապէս օգտակար ե- յացած է իր այն հայրենակիցներուն, որոնք զբաժնական խն- յիրներ ունեցած են զբաժնատան եւ ուրիշներու հետ՝ իրենց անվորձութեան պատճառաւ եւ ենթարկուած են շատ մը նե- ղութեանց: Պրն. Տաղտիկեան միշտ ալ օգնած է իր հայրե- նակիցներուն եւ յաջողած է նոյն խի վրիկէլ զբաժնական կո- յրուստներ՝ իր հայրենակիցներուն շահու ճամբաներ ցոյց տալով:

Մէքքըլ Թրքաթ ալ իլլիմոյ զբաժնատան մէջ մեր հայ- րենակիցին վայելած վստահութիւնն ու անկէ վարձատրուելը անկէ համար պատիւ մըն է եւ մեր կուրծքերը կուտին իրմով:

Պրն. Տաղտիկեան բնաւորութեամբ ալ շատ համեստ է եւ հայր՝ խաղաղ եւ պատուախնդիր ընտանեկան յարկի մը:

Այս բոլորին հակառակ սակայն, կը գտնուին Չնգուշցի- ներ Շիքահոյի մէջ, որ կ'երթան ու զբաժնատան նախագահին կողմէ կանգատին թէ Պրն. Տաղտիկեան զբաժնատան գաղտնիք- յիւնները զուրս կուտայ: Եւ այս ընտր մէկն է այն կարգի ապի- նակարներէն, որուն անունն իսկ հոս արձանագրել չարժեք: Այս մասին առ այժմ այսչափ. երբ ժամանակը դոյ մենք շատ աւելին պիտի բնենք այս մասին ու բոլորին ալ զմեզինքը վար պիտի անենք, սրպէս զի ամէն մարդ իր գոյնովը տես- նուի:

Շիքահոյ Ե. Ա.

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Պրն. Գառնիկ Գէորգեան, Ֆիլաթիքիա

Սիրելի Հայրենակից, «Կոչ Չնգուշցիներու» խորագրով գրութիւնը կարդացի ինչպէս ուրիշ թերթերու, նոյնպէս եւ ձեր սեփական թեր- թին «Կոռնիկ»ի մէջ: Այս աթիւն ես պիտի չհորձուրիմ մե- յադրել ուրիշ թերթեր, քանի որ անոնք ոչինչ կրնային զիտ- նալ մեր հայրենակցական գործերու մասին եւ ոչ ալ պէտքն ունէին հետաքրքրուելու թէ որո՞նք էին զայն ստորագրող- ները: Անոնք հրատարակած են այդ կոչը վճարել մը փոխա- րէն եւ անոր սիրոյն միայն:

Իսկ դուք որ Չնգուշցի էք եւ սեւէ մէկէն աւելի տեղեակ էք Չնգուշցի Վերջ. Միութեան կեանքին, եւ ամէն մեկիս վը- ռայ երկու տարի առաջ ալ իբրեւ Կեղը. Վարչութեան ատե- նապետ մասնաճիւղերու ուղղուած շրջաբերականներ ստո- ղագրած էք՝ կարգապահութեան ու սրբատաճանաչութեան

հրաւիրելով զանոնք, արդեօք ի՞նչ յետին մտքով հրատարա- կեցիք այդ տիրահոչակ կոչը եւ այժմ ի՞նչ անուն պէտք է տալ ձեզի:

Իայց ներեցէք, միտքս ինկաւ... Յուրան: Ան ալ Գրիս- սոսի աշակերտն էր եւ անոր անունով կը խօսէր, սակայն օ- ռին մէկը քանի մը արծաթի փոխարէն իր Տէրը մատնեց: Յտեսութիւն...:

Հայրենակիցդ
Ս. ՄԻՆԱՍԵԱՆ

ԱՐԺԱՆԻ ՊԱՏՈՒԱՆՇԱՆ ՄԸ

«Ծօվառ»ի Ապրիլի թիւը ճոխ էր բովանդակութեամբ եւ մանաւանդ լեցուն ապտակներով՝ երեսին անոնց, որոնք Չնգուշցի Վերջ. Միութեան մաքուր միջոցառմէն դուրս եկած՝ լծուած են քանդիչ գործունէութեան:

Ինչպէս բնական պահանջ մըն է փոտարանէլ հայրենա- սէրներու քաջագործութիւններն ու նուիրումի ողին, այն- պէս ալ անհրաժեշտ է ապտակել այն ամէն անհատները, ո- ռոնք իրենց զիւային ծրագրերներով կ'աշխատին քանդել վեհ նպատակ մը, որուն համար տարիներով աշխատանք թափ- ուած է եւ նիւթական ու բարոյական հսկայ գոհողութիւններ կատարուած են:

Երբ արդէն Չնգուշցի Վերջ. Միութեան նպատակը իրա- գործման ճամբուն մէջ կը գտնուի, ահա դուրս կուգան Մ. Էրմոյեանի եւ Պ. Գէորգեանի նման սեւ սիրտ քանդիչներ՝ Միութիւնը լուծելու յիմար եւ չարամիտ առաջադրու- թեամբ, որպէս զի արտասահմանի մէջ ապրող մեր բեկոր- ները մահանան իրենց անտանիկ թշուառութեան մէջ:

Չարժեք այդ պարոններու այս սխրալի գործունէու- թիւնը վարձատրել պատուանշանով՝ մը:

Ուրախ եմ ըսելու որ իմ պատուական Հայրենակիցներս զիտակցութեան ողին ունենալով, անմիջապէս հրապարակ իջան իրենց ապտակներով, եւ սեւ խարանը գրոջմեցին ա- նոնց ճակտին վրայ:

Ես ալ, իբրեւ նախանձախնդիր Չնգուշցի մը, կուգամ երկրորդ պատուանշան մը տալ այդ պարոններուն:

Դո՛ւք, նենգամիտ եւ քանդիչ պարոններ, հեռացէք մեր մաքուր շարքերէն, չենք սեղի որ այդ ձեր վատ մտայնու- թեամբ մնաք մեր մէջ՝ քանդելու համար մեր տարիներու ըն- թացքին ունեցած շինարարական եւ հայրենասիրական գոր- ծունէութիւնը. հեռացէ՛ք մեզմէ, եւ նոյն խի դադրեցէ՛ք Չնգուշցի անունը կրելէ, որովհետեւ Չնգուշցին կարող չէ ձեզի նման վատեր պահել իր ծոցին մէջ: Գացէ՛ք եւ ձեր այդ նենգամտութիւնը եւ քանդիչ գործունէութիւնը շարունակե- ցէ՛ք հոն ուր հող կրնաք դնել: Մեր մէջ հող չունիք դուք:

Դո՛ւք, պարոններ, վստահ եղէ՛ք որ այդ ձեր գործու- նէութեան իբր վարձատրութիւն պիտի ստանաք միայն նա- խատինք, իսկ Չնգուշցի Վերջ. Միութեան մայր տոմարին մէջ ձեր անուան դէմ սեւ տառերով պիտի գրուի Բանդիչներ... րառը:

Ահա այս է ձեր ապիկար գործունէութեան պատուանը- շանը...
Լօրէնս Ս. Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

«ԾՕՎԱՌ» ԵՒ ԻՐ ԴԵՐԸ

Ծօվառի անունը հոգույս մէջ կ'արթնցնէ հայրենի սրտու- յոյ, քաղցր ու ախար յիշատակներ:

Ի՞նչ անուն Չնգուշցիներու հայրենարար ճողինները կը յուզէ այնպէս՝ ինչպէս Ծօվառ անունը:

Ծօվա՛ռ, դուն կենդանի վիան ես մեր պերճալուք փառ- քին եւ տակաւին պատմութեան անձանօթ արհաւիրքին:

Դո՛ւն քու վեհապանձ կատարներովդ ծոցիդ մէջ մեծցող քաջերու սպանողը կ'ողբաս տիրօրէն եւ վերապրող վտարանդի դաւաճներուդ կարօտի թախիծովը կը տառապին :

Ո՛վ պաշտելի լեռ, մեր սրտերը միշտ պիտի բարբախեն ի յուշ քու խորհրդաւոր եւ վեհաշուք տեսարաններուդ : Ո՛չ մէկ ժամանակ կամ հեռաւորութեան սահման կրնայ ծածկել քու չքնաղ պատկերդ մեր սեւեռուն աչքերէն :

Դո՛ւն սրտալուրդ եւ սրտապնդիչ ներշնչում մըն ես մեզ համար : Քեզմով մեր հոգիին մէջ կը վերապրի ազատատենչ ողբին, զոր պիտի փոխանցենք նոր սերունդին :

«Ծօվառ» ամսաթերթիկը պիտի ըլլայ կամուրջը այդ փոխանցումին :

Ժողովուրդը մը բարոյապէս բարձրացնող եւ զայն դէպի յառաջդիմութիւն մղող առաջին ազդակը մամուլն է : Ազդի մը մամուլը իր դոյալիճակին հայելին է :

«Ծօվառ» թերթիկը կոչուած է այդ ուղղութեամբ մեծ դեր կատարել : Ան որպէս փարոս մեզ պիտի առաջնորդէ մեր իղձերու իրականացման եւ պիտի մղէ մեզ կատարելու մեր պարտաւորութիւնները հանդէպ մեր կարօտեալներուն :

Ուրեմն, մեզի կը մնայ կորովի եւ եռանդուն տրամադրութիւններով սուգորուած օժանդակել «Ծօվառ»ի եւ մեծցընել անոր ծաւալը :

Պէյրուք, Մարտ 23, 1928

ՆԵՐՎԱՐԻ

«ԾՕՎԱՌ»Ի ՀԱՄԱՐ

Չնչոյ վեր. Միութեան Զրկման մասնաճիւղին սարքած հաւեր-թախողին օրը, (Ապրիլ 15) Պրն. Խ. Ս. Սըրբմեան ղեկեցիկ դադարներ յղացած էր ծախելու «Ծօվառ»ի ջուրը :

Ան ջուրով լեցուն երկու կէլընոց կուժ մը ուսին տոժ՝ չընելով կը կանչէր. «Չո՛ւր, հա՛ ջո՛ւր, Ծօվառի ջո՛ւր...»: Հաւերթախողին համար հաւաքուած հայրենակիցներ կարծես բոլորն ալ ծարաւի էին «Ծօվառ»ի ջուրին. դաւաթը անսպաս կը վազէր : Պրն. Խ. Ս. Սըրբմեան թէ՛ իրեն դիմողները կը զոյգանէր եւ թէ կը քրտնոյնէր՝ անոնցմէլ դանձելով իր պահանջը ի նպատակ «Ծօվառ»ի : Ան շարունակ կը կանչէր. «Եկէ՛ք, տեսէ՛ք եւ խմէ՛ք, եթէ Ծօվառի ջուրին չի նմանիր, մի՛ խմէք եւ մի վճարէ՛ք» : Հայրենակիցներ թէ կը խմէին եւ թէ կը վճարէին առատաձեռնօրէն :

Վերջին քանի մը դաւաթ ջուրը հինգ տոյարի դնեց Պրն. Թորոս Տօգուրեանը : Այս անգամ ան սկսու կանչել. «Չո՛ւր, հա՛ ջո՛ւր, Ծօվառի ջո՛ւր...»: Այսպէս վերջին քանի մը դաւաթն ալ ծախուելով «Ծօվառ»ի համար այս երկու կէլըն ջուրէն զոյգացաւ \$15.00, բացի հաւերթախողի հատկութիւն : Այս դուժարը անմիջապէս զրկուեցաւ «Ծօվառ»ի վարչու-թեան :

Ահա թէ ի՛նչպէս «Ծօվառ» եւ վերաջինաց զիրար լրացնող աղակներ են : Կրնամ վտահօրէն ըսել թէ «Ծօվառ»ի դերը շատ մեծ եղած է այս շրջանին մէջ եւ ամէն մարդ յոյժ հետաքրքիր է անոր մասին, որովհետեւ սիրոյ կսպ մը ստեղծեց ան մեր մէջ : Այն հաւատքը ունիմ թէ այդ սէրը սակաւին լաւ տեղեր պիտի հասցնէ մեզ :

ՃԱՆ ԱՇՏԱՐԱԿԱՆ

ՉՆԳՈՒՇՑԻՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

ՄԱՐՏԻՅԸ.— Մեր Լօրէնսի հայրենակիցներէն Պրն. Ազար Ազարեան ութը օր Մարտի 11 մնալէ վերջ Հալէպ մեկնեցաւ : Յաջողութիւն իր դարձերուն :

*** Մարտի 11 մեր տարեց հայրենակիցներէն Պրն. Խաչատուր Տէր Պետրոսեանի Տիկինը Մարտ 9ին իր մահկանացուն կնքեց հիւանդանոցի մը մէջ : Թողման ախուր արարողութիւնը տեղի ունեցաւ Մարտ 11ին : Մեր վշտակցութիւնը կը յայտնենք հանգուցեալի սրաւոր ամուսնոյն եւ բոլոր պարզաներուն :

*** Պրն. Սարգիս Թուխոսեան վեց ամիս բացակայեցաւ քաղաքէս. ուրախ ենք ըսելու որ այժմ վերադարձած է : Բարի գալուստ կը մաղթենք :

*** Մեր դատուական հայրենակիցը Պրն. Խ. Եփեսուսեան գործարանէն դուրս ելած պահուն յանկարծ շնչապատ կ'ըլլայ. այս վիճակին մէջ հազիւ կրնայ մօտակայ հայրենակցի մը տունը հասնել, ուր ըստ բուսականի խնամուելէ եւ կազդուութիւն վերջ, կը մեկնի իր բնակարանը : Մեր յաւակցութիւնը կը յայտնենք :

ՊէՅՐՈՒԹ.— Մեր Լօրէնսի հայրենակիցներէն Պրն. Ազար Ազարեան քաղաքս ժամանեց եւ երեք օր մնալէ վերջ մեկնեցաւ Հալէպ :

*** Պրն. Կարապետ Այվազեան շատ լուրջ հիւանդութիւն մը ցուց, որմէ վերջ թորաթի կասկածով փոխադրուեցաւ Մայիսի 11 պարբերական : Ներկայիս անոր վիճակը բաւական լաւ է : Ծուռապարտեմ կը մաղթենք :

*** Մէկ շաբաթ առաջ Պրն. Խ. Կիւլեան զժրատութիւնն ու կորսնցնելու իր միակ նեցուկը եւ միջոցը ապրուստի հայրաթիւնը նոր կտաքն ու ձին՝ ծովը հող թափելու ատեն արկածով մը ջուրը կ'իյնան ու կը կորսուին :

Այս պարագան մեր Ամերիկայի հայրենակիցներուն, մասնաւոր Վեր. Միութեան եւ Արդունեան եղբայր շնչատու ման կը յանձնենք պէս զի փութան այս կորուստը դարձանել :

*** Մեր ստացած ստորջ տեղեկութեան համաձայն, Պրն. Ս. Փուսուկեան «Դրուսդներ Չնչոյի Անցեալէն» անուն պրօսայի մը տարակութեան ձեռնարկած է : Ի սրտէ յաջողութիւն կը մաղթենք հայրենակցին այս խիստ զովելի ձեռնարկին :

ԼՕՐԷՆՍ.— Պրն. Նիկողոս Գասադեան, որուն Ամերիկայէ մեկնելու քանի մը ամիսներու համար յետաճուած էր, Ապրիլ 12ին Պրն. ուղղակի Պէյրուք մեկնեցաւ : Բարի ողջութիւն կը մաղթենք իրեն :

*** Տէր եւ Տիկին Առաքէլ Ոսկերիչեան մանչ զաւակ մը ունի մեր խնդակցութիւնը կը յայտնենք :

*** Ապրիլ 8ին, Ծարաթ դիւեր, տօնեցինք Պրն. Յարութիւն Մեանի տօնը : Հայրենակիցներ ժամանակին եկած էին իրենց մաղթներն ըսելու : Վերաջինացի տեղուս մասնաճիւղին կողմէ ներկայ Պրն. Լեւոն Պետրոսեան :

Հայրենակիցներ ուրախ ժամեր վայելելէ յետոյ մեկնեցան, յալով իրենց շնորհակալութիւնները :

*** Ապրիլ մէկին խումբ մը Չնչոյիցիներով ունեցանք բաց խնճոյք մը Պրն. Սարգիս Գազանճեանի ազարակին մէջ : Խորհրդահարթ մը կը զարդարէր սեղանը : Եղան պարեր, երգեր եւ արտասթիւններ Անտօնեան փոքրիկներու կողմէ : Տիկ. Աղանի Գազանեան ուրախացուց մեզ իր անուշ երգերով, որուն կը մասնակցէին նայք Յակոբեան, Անտօնեան, Մաչուկեան եւ Քէհեախաչօեան : Ինչ յետոյ խօսեցաւ այս տղերք զրօրը. նախ շնորհակալութիւն յայ Տէր եւ Տիկ. Գազանճեանի եւ յետոյ քանի մը վայրկեան անդադար հայրենակցական զրոծելու եւ «Ծօվառ»ի կատարած օգտակար ծախքի մասին : Այս առթիւ զրոծակաւ անակցութիւն խնդրեց ներկանս առ այս բոլորն ալ խոստացան իրենց բաժինը բերել :

Ս. ՅԱՅՈՒ
*** ՅԻՔՆՆՆ.— Ապրիլ 8ին, Չատիկ Կիրակի օրը, տեղի ունէլ Սըրբմեանի անուն տարեդարձին եւ իր թոճիկին (որդի Մարտի 11-էն) հանդէպ : Փոքրիկ միտուեցաւ Անդրանիկ անուան Միկրտութեան արարողութենէն յետոյ, հայրենակիցներու բաղնիքին մը հաւաքուած Հէրի Սըրբմեանի շարք՝ հաճելի խօսակցութիւններով զիջելու մինչեւ ուշ ատեն ուրախացան : Մէջ ընդ մէջ կը զէին Փառ Մատղաշեան, Լեւոն եւ Ֆրէյտի իրենց նուազախումբով :

Մ. ՅԱՅՈՒ
*** ՅԻՔՆՆՆ.— Ապրիլ 8ին, Չատիկ Կիրակի օրը, տեղի ունէլ Սըրբմեանի անուն տարեդարձին եւ իր թոճիկին (որդի Մարտի 11-էն) հանդէպ : Փոքրիկ միտուեցաւ Անդրանիկ անուան Միկրտութեան արարողութենէն յետոյ, հայրենակիցներու բաղնիքին մը հաւաքուած Հէրի Սըրբմեանի շարք՝ հաճելի խօսակցութիւններով զիջելու մինչեւ ուշ ատեն ուրախացան : Մէջ ընդ մէջ կը զէին Փառ Մատղաշեան, Լեւոն եւ Ֆրէյտի իրենց նուազախումբով :

Միկրտութեան արարողութենէն յետոյ, հայրենակիցներու բաղնիքին մը հաւաքուած Հէրի Սըրբմեանի շարք՝ հաճելի խօսակցութիւններով զիջելու մինչեւ ուշ ատեն ուրախացան : Մէջ ընդ մէջ կը զէին Փառ Մատղաշեան, Լեւոն եւ Ֆրէյտի իրենց նուազախումբով :

ՅԻՔՆՆՆ.— «Ծօվառ»ի եռանդուն անդամներէն Պրն. Լեւոն զանեան յանկարծ հիւանդանոցով սաստիկ արեւահոստմ ունեցաւ. մը շատ լուրջ հանդամանք ստացաւ. անոր վիճակը : Մակայն, Տարբ. վարժապետանի խնամքին տակ երեք շաբաթ հիւանդանոց մնալէ ատց այժմ արդէն տուն բերուած է բաւական կազդուութեամբ վիճակի վտանգը բոլորովին անցած է եւ յոյս ունինք որ մօտեւս դարձեալ կ'ընդհանայ մեզի եւ կը մասնակցի մեր խաղերուն ու գործերուն : Այս թիւ մեր ջաւակցութիւնն ու ձեռնարկին ուրախութիւնը կը յայտնենք :

ՅԻՔՆՆՆ.— «Ծօվառ»ի եռանդուն անդամներէն Պրն. Լեւոն զանեան յանկարծ հիւանդանոցով սաստիկ արեւահոստմ ունեցաւ. մը շատ լուրջ հանդամանք ստացաւ. անոր վիճակը : Մակայն, Տարբ. վարժապետանի խնամքին տակ երեք շաբաթ հիւանդանոց մնալէ ատց այժմ արդէն տուն բերուած է բաւական կազդուութեամբ վիճակի վտանգը բոլորովին անցած է եւ յոյս ունինք որ մօտեւս դարձեալ կ'ընդհանայ մեզի եւ կը մասնակցի մեր խաղերուն ու գործերուն : Այս թիւ մեր ջաւակցութիւնն ու ձեռնարկին ուրախութիւնը կը յայտնենք :

*** Տէր եւ Տիկին Ն. Յատկալուրեանի փոքրիկը Սարգիս փոխա-հիւանդութիւնէ մը վարակուելով ամիսէն աւելի է որ կը մնայ հիւանդանոց, ուրախ ենք ըսելու որ այժմ լուսացած է եւ մօտ օրերս տունը բերուի : Ծառ թեթեւ կերպով հիւանդացան նաեւ Տէր եւ Տիկին Յակոբեան, որոնք եւս այժմ լուսացած են : Մեր խնդակցութիւնները յայտնենք :

*** Տէր եւ Տիկին Բունեանի փոքրիկը Արշէն մէկ շաբաթէն աւելի արեւանջի ցաւէ կը տառապի : Բժիշկներու ատուած խնամքէն այժմ ւաւան լուսացած է : Լիակատար ապաքինում կը մաղթենք :

*** Շիքախոյի մէջ հիւանդութիւնները շատ յաճախաղէպ են վերջինի մը շաբաթներու ընթացքին : Ամէն տուն ունի մէկ կամ երկու անոնք. բոլորին ալ մեր ջաւակցութիւնը կը յայտնենք եւ շուստընք ապաքինում կը մաղթենք :

*** «Ծօվառ»ի գործօն անդամ Պրն. Յ. Խոհարարեան Գուլայ մեկ լով ամուսնացաւ եւ իր աջնի Տիկինը Սըրբմեանի հետ տեղս ժամ Ապրիլ 22ին : Բարի գալուստ եւ երջանիկ օրեր կը մաղթենք Տէր եւ Տիկին Խոհարարեանի : Աչքը լոյս նաեւ Պրն. Գասարա Պուշուրաբեանի, Տարբ. Գազանի, Իօթէնի եւ Պետրոս Եայլաբեանի :

ԼՐԱՅ
*** «Ծօվառ»ի գործօն անդամ Պրն. Յ. Խոհարարեան Գուլայ մեկ լով ամուսնացաւ եւ իր աջնի Տիկինը Սըրբմեանի հետ տեղս ժամ Ապրիլ 22ին : Բարի գալուստ եւ երջանիկ օրեր կը մաղթենք Տէր եւ Տիկին Խոհարարեանի : Աչքը լոյս նաեւ Պրն. Գասարա Պուշուրաբեանի, Տարբ. Գազանի, Իօթէնի եւ Պետրոս Եայլաբեանի :